



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Հ Ր Ա Մ Ա Ն

23 *September* 2011թ.

N 682 -Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի N1-06/378-Ա ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N1-06/473-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի 4-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2008 թվականի նոյեմբերի 13-ի «ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 18.06.2008թ. № 1-06/227-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու, 04.07.2006թ. N1-06/378-Ա և N1-06/420-Ա հրամաններում փոփոխություններ կատարելու մասին» N1-06/473-Ա հրամանի 2-րդ կետը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2006 թվականի հուլիսի 4-ի «Կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունների անցկացման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N1-06/378-Ա հրամանի 5-րդ կետից հանել «- սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի ընթացքում կատարված կամերալ ուսումնասիրությունների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը և հարկային մարմնում իրականացված կամերալ ուսումնասիրությունների արդյունքում

հարկային եկամուտների ավելացման և (կամ) պակասեցման մասին տեղեկություններն ըստ հարկատեսակների, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը ներկայացնել ՀՀ ԿԱ ՀՊԾ վերահսկողության վարչություն՝ ըստ Ձև 3-ի և Ձև 5-ի:» պարբերությունը,

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչությունների պետերին՝

1) սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 04.07.2006թ. «Կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունների անցկացման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N1-06/378-Ա հրամանի 5-րդ կետին համապատասխան կամերալ ուսումնասիրությունների անցկացման վերաբերյալ տեղեկատվության և հարկային մարմնում իրականացված կամերալ ուսումնասիրությունների արդյունքում հարկային եկամուտների ավելացման և (կամ) պակասեցման մասին տեղեկությունների (Ձև3, Ձև5) ներկայացումը վերադաս հարկային մարմին,


2) Մինչև կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունների իրականացման ավտոմատացված ծրագրի ներդրումը շարունակել դրանց անցկացումը ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 04.07.2006թ. N1-06/378-Ա հրամանով հաստատված ուղեցույցին համապատասխան՝ հաշվի առնելով ուղեցույցի հաստատումից հետո հարկային և պարտադիր վճարների հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում կատարված փոփոխությունները:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Բեյրությանին՝

Ձեռնարկել միջոցառումներ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման շրջանակներում «Կամերալ հսկողության (ուսումնասիրությունների) ավտոմատացված ծրագրի մշակման և ներդրման» աշխատանքային խմբի կողմից տեխնիկական առաջադրանքի մշակման և ներկայացման ուղղությամբ:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Նախագահ



Գ. Խաչատրյան